

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկան 6 ռուբլի, Լուսնային համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրքով են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мелі»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լիզովով:

Յայտարարութիւններ կամար վճարուած են
խրաջանչիւր տաղաւաններ 10 կոպէկ,
Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խնչպէս կորուզի.—Ներքին Տեսչութիւն.
Հնազանդական ընկերութեան ժողովը. Ռուսաց
ներկայացուցիչները. Երկրաշարժ Երզրումում.
Նամակ Մեծ-Ղարաբաղի. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—Հեռագրութիւն.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԻՆՏԵՂԵՍ ԿՈՐՈՇՎԻ

Մի դժուար հարց է դրված կովկասեան
ցուցահանդէս կազմողներին առաջ: Ցուցա-
հանդէսի եկամուտը շատ քիչ է, իսկ ծախ-
քը ահաբեկ: Պակասը հասնում է մօտ
25,000 ռուբլու: Խնչպէս, ինչ աղբիւր-
ներից ծածկել և լրացնել այդ պակասը:
Նոր աղբիւրներ չը կան, իսկ շարունակել
ցուցահանդէսը առաջիկայ շաբաթներում
անկարելի է, որովհետեւ ցրտերն արդէն սկս-
վել են և ցուցահանդէս այցելողներին թիւը
շատ սահմանափակ է: Խնչ անել:

Կարգադրիչ մասնաժողովը, խորհրդակ-
ցութիւն անելուց յետոյ, եկել է այն եզ-
րակացութեան, որ պէտք է ցուցահանդէ-
սը այժմ փակել և նորից նորան բանալ
եկող տարի մայիս ամսին: Նոր ծախսեր
թէ և կը պահանջեն, բայց համեմատա-
բար քիչ, այնպէս որ եկամուտի մեծ մա-
սը կը գաւնայ զուտ արդիւնք, որով կա-
րելի կը լինի հանգցնել այս տարվայ
պարտքը: Կարգադրիչ մասնաժողովը բնա-
կանաբար պէտք է այդ որոշման վրա
կանգնէր, որովհետեւ նա ուրիշ միջոց չու-
նի ապահովելու իր պարտքերը:

Սակայն հարց է, թէ ո՞րքան հիմնաւոր
են կարգադրիչ մասնաժողովի յայտերը:
Արդեօք ցուցահանդէսը եկող տարի կու-
նենա՞յ հրապոյր հասարակութեան համար,
կը գրաւէ՞ այցելուներ և կը տա՞յ սպաս-
վող եկամուտը:

Եթէ ցուցահանդէսը մնայ նոյնը, եթէ
նա աւելի չը ձօնանայ և չը հարստանայ,
նա անկարող կը լինի մեծ աշողութիւն
ունենալ: Որպէս չի այդ ցանկալի աշո-
ղութիւնը ձեռք բերվի, անհրաժեշտ է, որ
ցուցահանդէսը լուրջ բարեփոխութիւննե-
րի ենթարկվի: Այս տարի, օրինակ, շատ
աղքատ և թույլ էին այդպիսի ծախսեր,
ծաղկաբուսութեան, բանջարաբուսու-
թեան մասերը: Չը կային անային կեն-
դանիների մեծագոյն մասի հանդէսներ.
օրինակ բոլորովին բացակայ էին կովեր,
գոմէշներ, ոչխարներ և այծեր, մինչդեռ
անանասագործութիւնը մեծ նշանակութիւն
ունի մեր երկրի ընդհանուր տնտեսութեան
մէջ: Շատ աղքատ էր գիւղատնտեսական
գործիքների բաժինը: Ինչ վերաբերում է
միւս բաժիններին, նրանց մեծ մասը կազմ-
ված էր շտապով և շատ հեռու էր լիա-
կատար լինելուց:

Աւելացրէք այդ բոլորի վրա և այն, որ
ցուցահանդէսում շատ քիչ էր բացատրո-
ղների թիւը և այցելուները ստիպված էին
ամբողջ ժամեր թափառել ցուցահանդէսի
բաժիններում, առանց լսելու կենդանի
խօսք հանդէս բերած իրերի և արդիւնա-
գործութեան մասին:

Արդարեւ, եթէ աշողի կարգադրիչ մաս-
նաժողովին առաջարկված բարեփոխու-
թիւնները իրագործելու, այն ժամանակ
ցուցահանդէսը կը ստանայ նշանակութիւն
և նոր հետաքրքրութեան հրապոյր: Իսկ
իրեն ամուլայ զբօսարան ցուցահանդէսը
կունենայ շատ գրաւիչ կողմեր, եթէ ուր
դարձնէ խելացի զուարճութիւնների կազ-
մակերպութեան վրա և ձեռք վերցնէ
այս տարվայ ներկայացուցիչների նման ա-
նաջող փորձերից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐ

Շաբաթ երեկոյեան, նոյեմբերի 3-ին, Թիֆ-
լիսի առաջին կապիտալ գիմնազիայի դահ-
լիւմում կայացաւ Մօսկվայի հնազանդական ըն-
կերութեան կովկասեան բաժնի ժողովը:

Նախագահում էր կոմսուհի Ուլարովա: Ներ-
կայ էին բաւական թիւով կողմնակի ունեւոր-
դներ:

Կոմսուհի Ուլարովա կարգաց կովկասեան
պ. կառավարչապետի նամակը, որով իշխան
Պօլիցին չնորհակալութիւն էր յայտնում իրան
պատմաւոր անդամ ընտրելու առիթով:

Ապա կարգացվեցին զեկուցումներ Ա. Բա-
լանթար զեկուցեց Ձաքարիա Ազուլեցու յի-
շատակարարի մասին: Ձաքարիա XVII դա-
րում ապրող մի վաճառական հայ էր, որ ա-
ռետակալ գործերով ճանապարհորդել է շատ
տեղեր, եղել է նոյն իսկ Ամստերդամում և
գրել է իր յիշատակարարին մէջ այն ամենը,
ինչ ուղարկութեան արժանի է համարել: Ձե-
կուցանողը ուղարկութիւն հրաւիրեց այն հա-
զամաքի վրա, որ մինչդեռ անցեալ դարերի
հայ մատենագիրները մեծ մասամբ եկեղեցա-
կաններ էին և իրանց գրութեան մէջ տեղ
էին տալիս միայն եկեղեցական և քաղաքա-
կան դէպքերին, Ձաքարիա Ազուլեցին, որպէս
վաճառական մարդ, ապրել է հետաքրքրական
տեղեկութիւններ և անտեսական, ժողովրդի
առնին կենսի մասին: Ձեկուցանողը բե-
րում է կտորներ, յայտնում է, որ Ձաքարիան
մանրամասն յիշատակում է այն բոլոր իշխան-
ները, որոնք գտնվում էին դէպի Ձաքարիա
տանող առետրական ճանապարհի վրա: Հեղի-
նակը զանց չէ անում և իր ժամանակի քա-
ղաքական անցքերը, իբրեւ վաճառական, նա
վարժ գրագէտ չէ, նրա գրութիւնը լինել է
սխալներով, բայց և այդպէս, նա թողել է
շատ հետաքրքրական տեղեկութիւններ, որոնք
գնահատելի են մեր երկրի անցեալի անտեսա-
կան և կուլտուրական պատմութեան տեսա-
կէտից:

Պ. Բալանթարի զեկուցումը առաջացրեց
մտքերի փոխանակութիւն: Ի միջի այլոց,
ցանկութիւն յայտնվեց, որ Ձաքարիա Ազու-
լեցու յիշատակարարը թարգմանվել ունեւորէն,
որովհետեւ նրա մէջ եղած տեղեկութիւնները
հարկաւոր են պատմական աշխարհագրութեան
համար:

Երկրորդ զեկուցումը կարգաց Մերզա-Այ-
ֆեդին Սէրգով այն արձանագրութիւնների
մասին, որոնք գտնվում են Թիֆլիսի Մուզէօնի
մի քանի անօթների վրա: Պարտք չէր թարգ-
մանում այդ արձանագրութիւնները, որ աւելի
հետաքրքրական կը լինէր, այլ, հիմնվելով
գրութեան ձեւի վրա, ենթադրութիւններ էր
անում թէ մօտաւորապէս որ ժամանակների
գործեր են այդ հնութիւնները:

Անուհետեւ պ. Ջանաչիլի սկսեց կարգա-
լի երկրորդ զեկուցումը Վրաստանի հին պատ-
մութիւնը ըստ սեպագծի արձանագրութիւն-
ների:

Յայտնի է, որ հին Ուրարտուի սեպագծի ար-
ձանագրութիւնները նոր ժամանակներում սկսե-
ցին կարգով գիտնականները: Հարց էր, թէ
ինչ լիզուով են նրանք գրված: Եւրօպական
գիտնականներից մի քանիները այն ենթադ-
րութիւնը յայտնեցին, թէ սեպագծի արձանագ-
րութիւնների լիզուն գուցէ վրացերէն լիզուն
նմանութիւն ունեցող մի հին լիզու է: Չը նա-
յած, որ այս ենթադրութիւնը տասնակի տա-
րիներ առաջ է յայտնված, մինչեւ այժմ էլ նա
մնում է լի կենթադրութիւն և ներկայ նորա-
դոյն հետազոտողներ, Բեյք և Լեւան, ոչինչ նոր
բան չեն աւելացրել այդ ենթադրութեան վրա:
Ռուս հետազոտող Նիկոլայ 1893-ին սպաս էր
մի աշխատութեան մէջ, կրկնելով նոյն են-
թադրութիւնը վրացերէն լիզուն մասին, այն
միտքն է յայտնում, որ սեպագրերի լիզուն և
վրացերէնի մէջ եղած մի քանի նմանութիւն-

ները դեռ բաւական չեն որոշ վտանգութեամբ
անելու, թէ վրացերէնն է արձանագրութիւն-
ների լիզուն, և պէտք է, որ վրացի լիզուա-
գէտները ուսումնասիրեն այդ հարցը տեղական
լիզունների գիտնական մշակութեամբ:

Ահա այդ գործը իր վրա է վերցրել պ. Ջա-
նաչիլիլին: Հիմնվելով վրաց պատմութեան մէջ
եղած աւանդութիւնների և վրացերէնում պա-
տահող ձեւերի և նոյնապէս բառերի վրա,
պարտք եկաւ այն եզրակացութեան, որ հին,
դեռ անյայտ ուրարտացիները կամ խաղերը
վրացիներ են եղած: Բերած ապացոյցների մէջ
կային մի քանի հատ հետաքրքրականները,
բայց շատ էին և այնպիսիները, որոնք գիտա-
կան քննադատութեան բովով չեն անցկացրած
և անհիմն են թւում: Այսպէս, Քրիստոսից
IX—VIII դար առաջ տեղի ունեցած մի դէպ-
քի հաստատութիւնը պ. Ջանաչիլիլին գտնում
է վրացական մի առասպելի մէջ, որ գրված է
Քրիստոսից յետոյ X դարում: Նմանապէս եր-
կար մանրամասնութիւններ են բերվում վրաց
պատմութեան մի կտորից, որ նկարագրում է,
թէ ինչպէս էր Ալեքսանդր Մակեդոնացին
նուաճում վրաստանի բերդերը: Մինչդեռ դրա-
կանապէս յայտնի է, որ Ալեքսանդր Մակեդո-
նացին երբեք չէ եղել վրաստանում, հետեւա-
բար եւ պատմութեան այդ կտորը զուրկ է որ
և է ճշմարտութիւնից:

Իր բերած փաստերը բաւական համարելով,
որպէս զի միանգամայն ապացուցված լինի թէ
ուրարտացիները վրացիներ են, պ. Ջանաչիլի-
լի կարգաց Նիկոլայից Ուրարտեան թագաւոր-
ութեան պատմութիւնը, որ, պարտնի անելով,
նշանակում է վրաց հին պատմութիւնը:

Ձեկուցումից յետոյ նախագահ կոմսուհի Ու-
լարովա յայտնեց, որ աւելորդ է վիճարանու-
թիւններ սկսել այդ զեկուցման առիթով, ո-
րովհետեւ դա մի փորձ է պարզելու մի քանի
հնագիտական հարցեր, մի փորձ, որ արել է
տեղացի, կովկասցի մի մարդ: Հետեւելով պ.
Ջանաչիլիլի հետազոտութեան եղանակին, ա-
ւելացրեց կոմսուհին, ուսման էլ կարող են
առել, թէ իրանց են ուրարտեան արձանագ-
րութիւնները, քանի որ Ուրարտուի թագաւոր-
ներից մէկի անունը Ռուսու է:

Ժողովը վիճարանութիւնների և ընդդիմա-
խօսութիւնների չը դիմեց: Միայն պ. Ա. Ներ-
ցեան նկատեց, որ եթէ իրաւ ուրարտացիները
վրացիներ են, այն ժամանակ ինչպէս պէտք է
բացատրել այն հանգամանքը, որ ամբողջ Վը-
րաստանում մի հատ սեպագծի արձանագրու-
թիւն մինչեւ այժմ չէ գտնվել: Սեպագրերի
սահմանադրու Սեւանի լիճն է համարվում:
Եթէ ենթադրենք որ հայերը, զուրա մղելով
ուրարտացիներին, բնակվեցան նրանց երկրում,
իսկ նրանք հարկադրված էին գնալ դէպի հիւ-
սիս, դէպի այժմեան Վրաստան, ինչպէս էր,
որ կուլտուրական բարձր զարգացման հասած
այդ ժողովուրդը ամեն ինչ մոռացաւ Դիլիշա-
նի կիրճը անցնելիս և ոչ մի յիշատակ չը
թողցէր իր մասին իր նոր հայրենիքում, այ-
սինքն այժմեան վրաստանում:

Նիստը փակվեց ժամի 10-ին:

ՌՈՒՍԱՃ ՆԵՐԿԱՅՈՒՄՆԵՐ

«Ռուսաստանում զանգուգ» առասպելա-դրամ 5
գործ., հեղ. Գ. Հատապոմանի
Ինտենական թատերականի սկիզբներին, երբ
նաուարալիզմը Գերմանիայում իր յաղթական
նուաճումներն էր անում, նշանաւոր դրամա-
տուրգ Հաուպտման, ինչպէս արամիա կերպով
նկատում է մի քննադատ, Վերկինքը հաւա-
նում էր բանաստեղծութեան դաշտից: Գեր-
մանական դրամատիկեան ապագայի մասին
խորհրդածելիս՝ նա բանաստեղծական երկու
ուղղութիւններ դնում էր դէմ առ դէմ, ո-
րոնք միմեանց բոլորովին ներհակ էին—մի
կողմից երկինք, միւս կողմից երկիր, մի կող-
մից իդէալ՝ միւս կողմից կեանք, մի կողմից
մարդաբանութիւն՝ միւս կողմից բանաստեղծու-
թիւն:

Բայց Վերկինքը բանաստեղծը երկրից
նորից ուղղեց իր հայեացքը դէպի երկինք.
Նաուարալիզմի արձակ միջավայրից մի փար-
թամ երեւակայութեամբ նա անգափօխեց դէ-
պի բանաստեղծական կոնաչ կղզիները, դէպի
առասպելական աշխարհը: 1896-ին լոյս առ-
եաւ և Բերկին «Գերմանական թատրոնում»
առաջին անգամ ներկայացվեց նրա «Ռուսա-
ստանում զանգուգ», որ թէ բնական և թէ
զուտ դրամական մի խոշոր երեւոյթ էր: Շուտով
այդ դրաման ոչ միայն գերմանական, այլ և
եւրօպական առաջնակարգ բեմերի զարդը դար-
ձաւ և միայն երեք տարվայ ընթացքում 44
հրատարակութեամբ լոյս ընծայվեց:

Դրաման առասպելական է, սիմբոլիզմական,
անգլանգ մինչև իսկ մոլով, անորոշ, Ահա
բովանդակութիւնը, որ մենք կաշխատենք բա-
ցարարութիւններով առաջ բերել:

Ջանաչիլիզմը վարպետ Հայրիկի մի մեծ
զանգուգ է ձուլել և կառուցել հովիտներից
բարձրացնում է դէպի լեռների դադաթը. ձա-
նապարհին ստուերախիտ անտառների չար ո-
գիներին մէկը բռնում է Հայրիկի կողքը և
անգլին բարձրութիւնից վայր է գլորում նո-
րաձող զանգուգը, որ խորատուղվում է լեռնե-
րի փեշերին տարածված լճի անդունդը:

Խեղճ վարպետ այս անակնկալ դժբաղդու-
թիւնից սարսափած՝ ընկնում է անտառ-
ների իր կորցրած զանգուգը որոնելու: Երկար
թափառելուց յետոյ նա հիւանդ, յոգնած և
վերաւորված հանդիման է առնում լեռների ստո-
րածում չինված մի փոքրիկ խոճիթի առաջ,
որ պատկանում է մի կախարդ պառաւի՛ ան-
տառի վտակին: Վերջինս կամենում է Հայրիկ-
իին անօգնական թողնել, մինչև իսկ օպանել,
բայց Բաուաճնդէլայն, անտառներում լողացող
օղակն օգին, յաւեփոհարար աշողում է լը-
նայել և մինչև իսկ կախարդական միջոցներ
է գործ գնում նրա կեանքը պահպանելու: Այդ
ժամանակ գիւղական քանդակ, ուսուցիչը և
օստիքիւր միտքն սար ու ձոր ընկած փնտռում
են վարպետին և վտակի խոճիթի առաջ գտնե-
լով նրան՝ կիսակենդան տուն են հասցնում:
Բաուաճնդէլայն խոճիթից դուրս գալիս՝ տես-
նում է, որ Հայրիկին անհետացել է նոյն
բուլեին խոճիթի առաջ՝ մի մեծ ջրհորի բերա-
նում ցցվում է ջրային ձիւղը, որ վաղուց
արդէն փորձում էր գրաւել Բաուաճնդէլայնին.
վերջինս նորից մերժում է գարշիլի ձիւղին
և իր մշտական բնակավայրը թողած վճռում
է իջնել դէպի «մարդկային ետեւից, որովհե-
տեւ առաջին անգամ իր փորձերից էր նրա
վրա:

Հայրիկին կինը՝ Մադլան իր երկու փոք-
րիկներին կերակրելուց յետոյ՝ յանկում է իր
դրացունուն, որպէս զի հայն իր ամուսնուն
ընդ առաջ. բայց ինչ դժբաղդութիւն, երբ նա
գտնում է Հայրիկին կիսակենդան: Յուսա-
հատված՝ նոյն իսկ գիւղական պատուօրի խոր-
հրդով՝ նա վճռում է իսկոյն գիւղի իրանցից
ոչ հեռու ապրող մի կախարդ կնոջ օգնու-
թեան: Բայց այս կախարդ կինը հենց ինքը
Բաուաճնդէլայն է: Նա մի քանի վայրկեա-
նում զանազան հայտնի միջոցներով վերական-
գնութիւն է տալիս կիսամեռ վարպետին:
Սակայն կախարդութեան ոյժը կայանում էր
նրանում, որ նա վերականգնանալիս ամբող-
ջովին Բաուաճնդէլայնին պատկանէր: Այսպէս
էլ տեղի է ունենում. Հայրիկի իր կնոջ և
զաւակներին թողած գնում է Բաուաճնդէլայ-
նի ետեւից: Անբաղք կնոջ կողմից երեւան է
գալիս պատուօր և փորձում է համոզել Հայն-
րիկին, որ նորից գտնույ իր ընտանիքի գիրկը:

Բայց եղևոր՝ նա անստիպ իր ընտանիքի գիրկը
վճել է անտառի թղուկների օգնութեամբ
հենց լեռների դադաթին մի նոր զանգուգ ձու-
լի, որ իր ձայնով ընդունելով լինի ամբողջ
մարդկութիւնը դղրդեցնելու: Պատուօրը Հայրի-
կի այս արարմունքի և դիտաւորութեան մէջ

հեթանոսական ձգտումներ է նկատում եւ զգուշացնում է իրան առեւտրի, որ խորացում է զանազան լծի յատակից մի օր պէտք է նորից հնչէ. այն ինչ Հայաստանի կարծիքով այդ զանազան այլ եւս անկարող է զօղանջել: Այս խոր համոզմունքով նա իր նոր դարձնանքում զբաղված է երազած զանգակը ձուլելով: Բայց հասկատարվում է պատմօրի գուշակութիւնը՝ Հայերի զեռ նոր էր հայալածել իր թշնամիներին՝ համագլխակցութիւնը, որոնք եկել էին բռնի կերպով նրան յետ անանկում, — երբ յանկարծ հետաւր աղօտ կերպով իր ականջն է հասնում ծանօթ զանգակի զօղանջները: Նա ստարափահար է լինում այս ձայնից: Մի քանի վայրկեանից յետոյ նրան երեւում են իր երկու զաւակները հոգիներ. նրանք իրանց փոքրիկ ձեռներով կրում են մի կտիկ: Զաւակները իրանց հանգուցեալ մօր կողմից ողջոյն են բերում իրանց հօրը. իսկ երբ վերջինս հետաքրքրվում է իմանալ ինչ կայ փոքրիկ կտիկէջ — «Ամբ մայրիկի արցունքները» — պատասխանում են մի աղետալ չեղանով երկու փոքրիկները: Մագաւն ծանր տառապանքից «ցել էր իրան այն լիճը, որ խորացում էր իր սիրած մարդու զանգակը. այժմ նա իր փայտացած մասներով ջրի յատակից շարժում էր հեղափայտ զանգը, որի զօղանջները հետզհետեւ սաստկանում էին Հայերի այն եւս չէ կարող համբերել. նա խորապէս ըմբռնում է իր գործած յանցանքը՝ անիծում է Բաւոյնը՝ զէլային եւ շատապով զնում զանգի ետեւից: Ահա նա յոգնած, կիսակենդան դարձեալ ընկած է վիռկի խրճիթի առաջ: Բաւոյնը լայն այժմ ջրային ճիւղի հարան է դարձել: Զրօրի եղբայրներն նստած՝ նա իր գիտակցութիւնը յարգարում: Մի անթափաթ Հայերի ինչ նկատելով՝ մօտենում է եւ ցոյց է տալիս նրան իր վերջին ծառայութիւնը՝ մատուցանում է վիռկի պատրաստած մանկան բաժակը: Երբ Հայերի ձակապարտական բաժակը դատարկում է՝ կամպար-կամպար բացվում է գեղատի-ծաղ առշույթը. բայց նա աւանդում է իր շունչը արեւի կարօտը կրծքին:

Զանգակը քրիստոնէութեան նշանն է. Հայերի այս նշանը թողած հեթանոսական իդէալներն եւ զգայական ձգտումների ետեւիցն է ընկնում: Անտառի եւ լեռների թաղարարութեան մէջ՝ նա իրան միանգամայն ազատ եւ ինքնիշխան է գտնում. բայց երկարատեւ բաւականութիւն նա չէ կարող վայելել, որովհետեւ անտառի օգնիները եւ յաւերժանքները միայն զգայական են որոնում, հոգեղէնի, իդէալականի մասին ոչ մի զառաքիւր չունենալ: Եւ հաճաքում է իդէալի ծարաւով պայտակած մարդ ճանապարհներին հրաժեշտ տալով վազում է գէպի իսկական աղբիւրը՝ ուժաւորում է լինում՝ իդէալի վարդապետ ճանաչներն է միայն վայելում եւ ոչ բուն ջերմութիւնը:

Պարտաւորված զանգակը սկզբից մինչեւ վերջը փայլում է գրաւորութեան եւ լեռնական խոշոր արժանաւորութիւններով: Դրաման աւելի յափշտակիչ, առաւելաբար տարրը աւելի գրաւիչ է դառնում մանաւանդ այն պատճառով, որ ամբողջովին ոտանաւորով է գրված: Հատկապէս իր այս դրամայով փայլում է մինչեւ իսկ իբրեւ մի խոշոր քնարերգուի:

Ներկայացումը, որ տուեց Վօլգինայի դրամատիքական խումբը կերպի, նոյեմբերի 4-ին, արտիստիքական թատրոնում, գրաւել էր բաւական մեծ բազմութիւն: Խոստովանում ենք, որ մենք կանխակալ մի յոռեան տարածադրութեամբ մտանք թատրոն, բայց հետագայք միանգամայն բաւականացած: Խաղը, մեր կարծիքով, շատ աղոյ անցաւ: Տիկին Տիրապոլսկայաի Բաւոյնը լայն թէեւ մի խոշոր երեւոյթ է, բայց միանգամայն գոհացուցիչ: Տիկինը Բաւոյնը չէր իմացնում ինքնութեան, օգեղէն յատկութեան պէտք է միայն զգայական աւելի կրճատ մի գիծ: Այս պակասութիւնը նկատելի էր մանաւանդ երրորդ գործողութեան մէջ: Գ. Արկունին Հայերի մեզ վրա նոյնպէս լաւ ազդեցութիւն թողեց. նա նուրբ կերպով էր ըմբռնել իր պատասխանատու դերը եւ խաղում էր մտածված աշխրջութեամբ: Առաջին երկու գործողութիւնները նա համեմատաբար թոյլ տարաւ, իսկ երրորդ եւ չորրորդ գործողութեան մէջ նրա խաղը շատ ազաւորիչ էր եւ փայլուն: Օր. Գլինսկայան Մագաւնի դերը կենդանի եւ բնական պարզութեամբ խաղաց: Գ. Սալովիկին պատմօրի սկզբում միջակ էր, բայց երրորդ գործողութեան վերջին տեսարանում նրա խաղը ազգու արտայայտութիւն տալով: Միւս դերակատարներից աչքի էին ընկնում Կիլիկի Սալովիկայա, պ. պ. Ուլիկա ու

Խմէլինցի. վերջինս աղոյութեամբ խաղաց ջրային ճիւղի դերը, բայց «Բրէկէկէկէկէկ» ժամանակ պակասում էր պարոնին ձայնի խորութիւնը եւ լիւնհունութիւնը: Զիւադն առհասարակ շատ լուսաւորված չէր պէտք է լինի եւ պէտք է իր գլուխը միայն ցոյց տալ:

Դէկորացիան շատ լաւ էր եւ համարեա նրան ինքնին զգրմանական թատրոնի մի եւ նոյն դրամայի գէկորացիաներին:

Վ. Նալբանդեան

ԵՐԿՐԱՇԱՐԺ ԵՐԶՐՈՒՄՈՒՄ

(Նամակ Կարօյ)

Նոյեմբերի 30-ին գրված մասնաւոր նամակներից քաղելով էրզրումի արարատիկի երկրորդ շարժի մանրամասնութիւնները՝ շտապում եմ հաղորդել Ուրաթ օր, հոկտեմբերի 26-ին, առաւօտեան ժամը 6-ին տեղի է ունեցել օտարիկ զորեղ ուղղահայեաց ցնցումն, որի շնորհիւ քաղաքի շինութիւնների մի մասը քանդվել է, իսկ կանգուն մնացածներն էլ բնակութեան համար անպէտքացել են: Ամբողջ ժողովուրդը ապրում է վրանների մէջ. կառավարութեան միջոցով անտուն եւ բաց երկնքի տակ մնացած աղքատների համար պիտի չինվեն տախտակէ անակներ: Մինչեւ հոկտեմբերի 29-ը ցնցումները պարբերաբար կրկնվել են թէ ցերեկը եւ թէ գիշերը: Դրանցիները գաղթում են, ոմանք էլ ընտանիքներով փոխադրվում են գիւղերը: Եկեղեցին քանդվելու վտանգի մէջ է. հոկտեմբերի 28-ին հորիզոնական ուղղութեամբ տեղի է ունեցել որոտալից եւ զորեղ ցնցումն, որը քանդել է միջնաբերդի մի մասը: Փլուսակների տակ մնացածների թիւը ենթադրաբար կարծւում է 130:

Ամբողջ վտանաւանդութիւնը դադարած է, խառնութիւնը փակ են, բայց մի քանի հացամիտներով, ժողովուրդը ընդհանրապէս շատ ծանր դրութեան մէջ է պատահած աղէտի, ցրտի եւ ձիւնախառն անձրեւի պատճառով: Մինչեւ հոկտեմբերի 30-ը ծանր կամ թեթեւ կերպով ցնցումներ են տեղի ունեցել 35 անգամ: Եթէ ուրիշ կարեւոր մանրամասնութիւններ տեսցվեն, կաշխատեմ իսկոյն հաղորդել:

Ն. Նոյրատեան

ՆԱՄԱԿ ՄԵԾ-ՆԱՐԱՔԼԻՍՍԱԹԻՑ

Հոկտեմբերի 26-ին

Շուտով նոր տանտէրի ընտրութիւն է լինելու մեզանում. հաւանական է, որ կրկին կընտրվի մի այնպիսի անձնաւորութիւն, որի նախորդների նման երեք տարի շարունակ բաւոյնացեալ եւ նիւթապէս հարստահարելով ժողովուրդը, ասպարէզը կը թողնէ իր նմանին, մի դրութիւն, որ կրկնվում է աւելի քան երեսուն տարի, սկսած գիւղական բեֆօրմիների հէց առաջին օրից:

Ճանաւարներն սկզբում ընտրվում են մեծ մասամբ անձնք, որոնք սովոր, մեծացել, կրթվել են պատմային ազգականութեամբ, ներսած մըթնադարում. այդ «խաղէկներն» ու «տարրուտներն» եւ մասամբ «գութանիկներն» հերթով մեր հասարակական գործերը զուլա անցնելով առանց քաղվելու, առանց կարմրելու, առանց խղճահարկելու, սանձաբակ կերպով ամեն չափը հասցրել են ժողովուրդին: Անկասկած այսպէս չէր լինի եւ նրանք իրանց ամբողջ զօրութեամբ կը խորտակվէին, եթէ միայն մեր ժողովուրդը կամքէր ուժ ունենար, փորձիկներէն ճանաչէր, իր իրաւունքները պաշտպանելու ընդունակութիւն ցոյց տար, գիւղացաբար գործէր: Դժբաղաբար, հասարակութիւնը զուրկ լինելով այդ առաքինութիւններից, հասունութեան ոչ մի նշան, գիտակցութեան ոչ մի նշոյլ ցոյց չը տալով, լայն ասպարէզ է բացել պաշտօնատար անձանց համար յանդուգն եւ անպատիժ կերպով հայտնել, թեք, քանափարել եւ կողոպտել նրան: Փաստեր որքան կամենում էք. բայց «Մշակի» էջերը պէտք է խնայել, եւ ինչ օգուտ, եթէ նրանց անմաքուր գործերը լայն աշխարհ հանցիք: Նրանց կաշին չափազանց հաստ է եւ հազիւ թէ ձեր մարմնը կարող լինի մարդկային զգացմունք զարթեցնել նրանց քաղէ արտերի մէջ:

Բայց ենթադրենք, որ բազմի բերմունքով զեթ այս անգամ մեզ աղոյվեց մի բարեխիղճ եւ փոքրիկ շատ քան զօրութեան պատմաբան Կարող լինի մարդկային զգացմունք զարթեցնել նրանց քաղէ արտերի մէջ:

Բայց ենթադրենք, որ բազմի բերմունքով զեթ այս անգամ մեզ աղոյվեց մի բարեխիղճ եւ փոքրիկ շատ քան զօրութեան պատմաբան Կարող լինի մարդկային զգացմունք զարթեցնել նրանց քաղէ արտերի մէջ:

երբ շատ ենք լսել, յոգնել ենք, իսպառ յոգնել ենք: Ահա այդ հարցերը:

1. Հասարակական դրամների հաշուեւորութիւնը կարեւոր է այնպիսի հաստատուն եւ կանոնաւոր հիմքերի վրա դնել, որ յետագայ տանտէրների համար նոյնպէս մի անգամ ընդ միշտ կանոն դառնար ճիշտ, կանոնաւոր եւ իր ժամանակին հաշուեւորութիւնը:

Մի այսպիսի բան մինչեւ հիմա մեր մեծ ու փոքր տանտէրների գործունէութեան մէջ չէ նկատված 30 տարւոյ ընթացքում եւ նրանց ծրագրից մշտապէս դուրս է մնացել այս կարեւոր հարցը, չը նայելով ժողովուրդի պահանջներին:

2) Հողային խնդիրը վաղուց է զբաղեցնում մեր ժողովուրդին. եթէ վիճելի հողերը դժուար է հասարակական դարձնել, գէթ պէտք է աշխատել ձեռք բերել այն հողաբաժինը, որ անցնաւուր անտառապետները ճարպիկութեամբ գրաւել են «տնկարանի» պատրուակով, իսկ այժմ աճուրդով է տրվում: Երկաթուղու վարչութիւնը նոյնպէս գրաւել է աւելի քան 100 դեռեւանային հասարակական հողերից. ի հարկէ հնար կայ փոխարէնը ստանալ, մանաւանդ որ մեր հողերին կից պետական հողեր կան: Միայն թէ ընդունակ պէտք է գտնվել, չնորձ եւ եւս անդ պէտք է ցոյց տալ հասարակական շահերը պաշտպանելու գործում:

3) Անհրաժեշտ է բարեկարգել փողոցները, անհրաժեշտ է գիւղը մաքրել անմաքութիւններից. այժմ աւելի քան երբ եւ իցէ այդ կարեւոր է, եթէ կամենում ենք մեծ թւով անտառային եկուղներ գրաւել. այսպէս ամենքը կը զգվեն անգիւղի եւ երես կը դարձնեն:

4) Մեր մաքուր ջրերը, մեր արծաթափայլ, պատուական գետակները ու առուները ապակւնվում են դարչ աղանդութիւններով: Ժրան տանտէրի համար առանձին դժուարութիւն չէ ցանկալի դրութեան մէջ պահել:

5) Սպանդանոց չինվեց. մագործները կանոնաւոր կերպով այնտեղ էին մերթւում մասցունները. ինչու այժմ գործադրութեան մէջ չէ, ինչ է պատահել... Ներկայ գիւղական վարչութիւնը ինչ է մտածում, թոյլ տալով մագործներին խուլ անկրկններում մորթոտել. կամ քանդեցէք սպանդանոցը, կամ նպատակի ծառայեցրէք:

6) Ամեն տարի հարիւրներով տաւար ջրում տանում են թուրքերը, առաւելապէս մի խումբ տեղացիների օգնութեամբ, խեղճ գիւղացու վիզը ծածկ թողնելով. միթէ հնարաւորութիւն չը կայ խիտ միջոցների դիմել եւ սանձահարկել թուրքերի զայլի ախորժակը: Մինչեւ հիմա մեր տանտէրների մասը մասին չեն խփել եւ ուսերը թափ տալով դատարանի դռնն են միայն ցոյց տուել խեղճ գիւղացուն:

Ղարաբաղի խնդիր

ՆԱՄԱԿ ԽՄԱԿԳՐՈՒԹԵԱՆ

Բերլին, նոյեմբերի 2-ին

«Մշակի» № 220-ի մէջ պ. Ե. Թ.-ի նամակի առթիւ թոյլ տուէք երկու խօսք ասել:

Իբրեւ հերթական նախագահ «գրական ժողովի» այն նիստի, ուր բաւ. Թ. փնտրել է պ. Թախանեանին պատժել եւ միայն «ժամանակի սղութեան» պատճառով պատժի չափի որոշելը յետաձգել հետեւեալ նիստին», յայտնում եմ, որ «գրական ժողովը» իր նիստերից ոչ մէկում այդպիսի որոշումներ չէ կայացրել:

Ինչ վերաբերում է պ. Ե. Թ.-ի կողմից առաջարկած «միջոցառումներին», որից իբր պ. Թախանեան հրաժարվել է, պէտք է նկատել, որ այդ առաջարկութիւնը զրկված էր քննութեան առաջի նիստի սկզբում, օակայն ժողովը իրան անմիջապէս խանգ գտնելով այդ գործի մէջ, մերժեց այդ առաջարկութիւնը, զարձակելով այդ հարցը իր քննութեան առարկայ:

«Գրական ժողովի» հերթական նախագահ՝ Գր. Սաղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Շաբաթ, նոյեմբերի 3-ին, տեղի ունեցաւ կովկասեան ցուցահանդէսի առանձին բաժանմունքների կառավարիների ժողովը՝ քննելու համար այն հարցը, թէ ցանկալի եւ հնարաւոր է արդեօք ցուցահանդէսը նորից բանալ առաջիկայ 1902 թվականի ամառը: Կառավարիների մեծամասնութիւնը հաւանութիւն տուեց այդ առաջարկութեանը՝ համարելով նրան ամեն կողմից օգտակար: Նոյն հարցը քննելու համար շուտով կ'ունենայ եւ մի այլ խորհրդակցութիւն, որին կը մասնակցեն ցուցահանդէսի գլխաւոր վարչութեան անդամները:

Մեզ հաղորդում են, որ կիրակի, ամսիս 4-ին, Ներսիսեան դպրոցի ուսուցչական խումբը մ. ճաշկերպով պատեց պ. Գէորգ Բարխուդարեանին, որ այս տարվանից, ծերութեան պատճառով, թողել է ուսուցչական պաշտօնը: Ներսիսեան դպրոցում, որտեղ անընդհատ ծառայում էր 22 տարի, ճաշկերպի ժամանակ ցանկութիւն յայտնվեց տօնելու պ. Բարխուդարեանի քառասունամեայ գործունէութիւնը՝ մանկավարժական եւ գրական առարկաներում, որ մեծ համակրութեամբ ընդունվեց ներկայ եղողների կողմից:

Նաւթարդիւնաբերողների դաշնակցութիւնը, որի կազմակերպութեան մասին խորհր էին պիտի «НОВ. ВРЕМЯ» լրագրի խօսքով, կայացաւ: Դաշնակցութիւնը կազմում են 22 ֆիրմաներ, որոնց պատկանում է Ապշերոնի ամբողջ նաւթի 1/5 մասը: Խոշոր ֆիրմաները չեն մասնակցում: Դաշնակցութիւնը գործում է հինգ ամիս (1901 թվ. հոկտեմբերից մինչեւ 1902 թվ. փետրվարը) եւ ընտրված ներկայացուցիչներից կազմված մասնաժողովի միջոցով ծախում է արդէնահանած նաւթը շուկայում, կապալով է վերցնում եւ կառուցանում է դաշնակցութեան հաշուով հասարակական նաւթամբարներ: Խոշոր տաւարներն են ենթարկվում նրանք, որոնք նաւթ կը վաճառեն դաշնակցութիւնը: Դաշնակցութեան կամեցէ՛ք մասնակցողներին որ եւ է մէկը կը հրաժարվի վերանորոգել դաշնադիրը հետեւեալ չորս ամսվայ համար:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ «Պետերբուրգի» ճանապարհ է ընկել կովկասալու գաղտնի խորհրդական Վ. Ս. Արիկանովի:

«Каспий» լրագրում կարդում ենք. «Երէկ, նոյեմբերի 2-ին, Բազուից Պետերբուրգ ուղեւորվեց Պետերբուրգի պարսկական դեսպան Մուշիքի-Մուշիք-Միրզա-Հասան-խան: Պեղեցիկ կերպով կրթված, երիտաւար, եռանդուն եւ իր յետամնաց հայրենիքէ շահերին նուիրված՝ պարսկական նոր դեսպանը այն կործ ժամանակամիջոցում, որ նա անցկացրեց Բազում, շատ լաւ տպաւորութիւն թողեց ամենքի վրա: Ի ընէ օժոված ոչ-սովորական ընդունակութիւններով, Միրզա-Հասան-խան հէնց այժմ էլ յայտնի է Պարսկաստանում, որպէս աչքի ընկնող վարչական անձն եւ դիւանագէտ: Ի միջկայրոց նա կազմել է հիւպատոսական նոր կանոնադրութիւն մանրամասն հրահանգներով պարսկական հիւպատոսների, փոխ-հիւպատոսների եւ հիւպատոսական գործակալների համար: Այդ կանոնադրութիւնը, որ արդէն արժանացել է նրանի մեծութիւն Շահի վաւերացմանը, արդէն սկսել է իրագործվել եւ խոստանում է ապագայում բոլորովին յեղափոխել պարսկական հիւպատոսութիւնները, որոնց, ըստ կանոնադրութեան, յանձնվում է պաշտպանել արտասահմանում Պարսկաստանի առեւտրական եւ արդիւնաբերական շահերը, ինչպէս նաեւ հովանաւորել պարսկահպատակներին»:

Ներքին գործերի մինիստրութեան մէջ կազմված մի առանձին մասնաժողով, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, պէտք է քննէ նահանգական հիմնարկութիւնները՝ Բեֆօրմի ծրագրի Ռուսաստանի կենտրոնական 49 նահանգներում: Բեֆօրմիները չեն մոցնվի կովկասում, Պրիվաթեանսկի երկրում եւ հարաւարեւելեան նահանգներում:

Ռուսաց դեղագործների ընկերութեանը թոյլ է տուած տօնել այն օրվայ երկուհարիւրամեակը, երբ Ռուսաստանում բացվեց առաջին դեղատունը: Երեւանի հանդէսը տեղի կունենայ Պետերբուրգում այս նոյեմբեր ամսի 23-ին:

Նոյեմբերի 4-ին Պետերբուրգում, գիւղատնտեսական թանգարանի շինութեան մէջ, բացվեց մեղուապահների համառուսական ժողովը: Երկրագործութեան եւ պետական կառուածների մինիստրութեան կողմից, որպէս ներկայացուցիչներ, նշանակված են յայտնի մեղապահների պրօֆէսոր Կարբուկով եւ Սլադկին: Բացի արանցից համաժողովին մասնակցում են եւ այլ նշանաւոր մեղուապահներ, ինչպէս պրօֆէսոր Գլադկինայ, Մոսկովայի համալսարանի պրիվատ-դոցէնտ Կոսեմիկով եւ ռուսաց մեղուապահների ընկերութեան նախագահ Շիխանով:

Պետերբուրգի բարձր դատակարգի կանանց շրջանում, որոնք համակրում են բօքսերին:

